ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/18» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի ապրիլի 18-ին կնքված N ՇՀԱՊՁԲ-7/18-2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ-ի փետրվարի 4-ին մասնակի լուծելու վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Մասնակի լուծելու պատճառ: Համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված շուկայական գները՝ Պայմանագրով նախատեսված գներից ավելի քան 20 տոկոսով բարձրացել են:

Մասնակի լուծելու նկարագրություն: Հաշվի առնելով համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված շուկայական գների՝ Պայմանագրով նախատեսված գներից ավելի քան 20 տոկոսով բարձրանալու փաստը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի՝ «Վրան՝ ՈՒՍԲ-56» ապրանքատեսակի ամբողջ քանակի՝ 71 լրակազմի մասով լուծել ՇՀԱՊՁԲ-7/18-2 պայմանագիրը:

Մասնակի լուծելու հիմնավորում: Մասնակի լուծումը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.6 կետի «բ» ենթակետը և ՀՀ կառավարության՝ 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի 2-րդ ենթակետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Ν ՇՀԱՊՁԲ-7/18-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 04 **.02.2015թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Գլամուր» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ջ.Մկրտչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 18.04.2014թ. կնքված Ν ՇՀԱՊՁԲ-7/18-2 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.6 կետի «բ» ենթակետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված շուկայական գների՝ Պայմանագրով նախատեսված գներից ավելի քան 20 տոկոսով բարձրանալու փաստը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի՝ «Վրան՝ ՈՒՍԲ-56» ապրանքատեսակի ամբողջ քանակի՝ 71 լրակազմի մասով լուծել ՇՀԱՊՁԲ-7/18-2 պայմանագիրը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո, բայց ոչ ուշ, քան 01.06.2015թ. Վաճառողը պարտավորվում է սահմանված կարգով վճարել Պայմանագրի լուծման արդյունքում առաջացած տույժերը՝ 5 582 272 (հինգ միլիոն հինգ հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամի չափով:

2.3 Սույն Համաձայնագրի մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Գլամուր» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Սարյան 36 բն.21
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 90001114079	Հ/Հ 247010312764
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02622822
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	**Ջ.ՄԿՐՏՉՅԱՆ**